ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 11

29 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2024թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 17 անդամներ:

Բացակա էին՝ Արտյոմ Գեվորգյանը, Էմմա Մարգարյանը, Գոռ Մեծոյանը, Վահագն Սարգսյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝ Ստելլա Բադալյան, Նարեկ Մարգարյան

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Գագիկ Մաթեվոսյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Արման Սմբատյանը

Լսեցին

ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 29- Ի ԹԻՎ 11- ՐԴ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՄԱՆ ՍՄԲԱՏՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ և 16-րդ հոդվածների դրույթներով՝ Նոր Հաճըն համայնքի ավագանին՝ որոշում է.

Հաստատել համայնքի ավագանու 2024 թվականի նոյեմբերի 29-ի երկրորդ նստաշրջանի հերթական թիվ 11 նիստի հետևյալ օրակարգը

1.<<Նոր Գեղիի Ցոլակ Մանվելի Խաչատրյանի անվան մշակույթի կենտրոն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն անվանափոխելու և կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու մասին

2.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնքի « Նոր Հաճըն համայնքի Նոր Արտամետի մանկապարտեզ» համայնքային ոչ առեվտրային կազմակերպությանն անհատույց օգտագործման իրավունքով անշարժ գույք տրամադրելու մասին

3.Նոր Հաճըն համայնքի սուբվենցիայի ծրագրային հայտերին հավանություն տալու մասին

4.Նոր Հաճըն քաղաքի ջրահեռացման և ջրամատակարարման համակարգը Հայասատանի Հանրապետությանը ի դեմս ՀՀ ՏԿԵՆ Ջրային Կոմիտեի նվիրելու մասին

5.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 28 -ի N 134-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

6.Ընդհանուր բաժնային սեփականություն համարվող անշարժ գույքերի «Նոր Հաճընի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկին պատկանող բաժնեմասերն օտարելու մասին

7.Համայնքի ղեկավարի առաջարկին հավանություն տալու մասին

8.Նոր Հաճըն համայնքի ավագանու 2- րդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 104-Ա/

Լսեցին

<<ՆՈՐ ԳԵՂԻԻ ՑՈԼԱԿ ՄԱՆՎԵԼԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՄԱՆ ՍՄԲԱՏՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 8-ի N 515-Ն որոշման պահանջներով Նոր Հաճըն համայնքի ավագանին որոշում է.

1. « Նոր Գեղիի Ցոլակ Մանվելի Խաչատրյանի անվան մշակույթի կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը անվանափոխել Հայաստանի

Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնքի « Նոր Գեղիի Ցոլակ Մանվելի Խաչատրյանի անվան մշակույթի կենտրոն» » համայնքային ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ կազմակերպություն):

2. Կազմակերպության կանոնադրությունում կատարել սույն որոշման 1-ին կետից բխող համապատասխան փոփոխությունները և հաստատել կազմակերպության կանոնադրությունը նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

3. Հանձնարարել կազմակերպության տնօրենին՝ 15-օրյա ժամկետում ապահովել կազմակերպության կանոնադրության փոփոխության պետական գրանցումը Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 105_Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ « ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՄԱՆ ՍՄԲԱՏՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Քաղաքացիական օրենսգրքի 685-699-րդ հոդվածների, Հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ Նոր Հաճըն համայնքի ավագանին ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնքին սեփականության իրավունքով պատկանող Նոր Հաճըն համայնքի Նոր Արտամետ գյուղի 2 փողոցի 1- ին նրբանցք 1 հասցեում գտնվող անշարժ և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասն գույքը (կադ. ծածկագիր՝ 07-047-0014-0001) անորոշ ժամկետով, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի « Նոր Արտամետի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը՝ նպատակային նշանակությամբ օգտագործելու համար:

2. Առանց համայնքի ավագանու համաձայնության չի թույլատրվում անշարժ գույքը հանձնել երրորդ անձի օգտագործմանը, ինչպես նաև իրականացնել քաղաքաշինական գործունեություն:

3. Հանձնարարել Նոր Հաճըն համայնքի « Նոր Արտամետի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենին՝ ապահովել որոշման կատարումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 106-Ա/

Լսեցին
ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՅԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԱՅՏԵՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՄԱՐԳԱՐՅԱՆ /

կատարումը:
Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի N 1708-Ն որոշման N 2 հավելվածի 12-րդ կետի 2-րդ ենթակետի՝ Նոր Հաճըն համայնքի ավագանին որոշում է. Նոր Հաճըն համայնքի ավագանին ո ր ո շ ու մ է.

Տալ հավանություն Նոր Հաճընի համայնքի <<Մրգաշենի մանկապարտեզ>> ՀՈԱԿ -. ի հիմնանորոգում,Մրգաշեն գյուղի մշակույթի տան վերանորոգում աշխատանքների սուբվենցիայի ծրագրագրերի հայտերին և ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարություն:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 107-Ա/

Լսեցին
ՆՈՐ ՀԱՃԸՆ ՔԱՂԱՔԻ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ԵՎ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՀԱՅԱՍԱՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ Ի ԴԵՄՍ ՀՀ ՏԿԵՆ ՋՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՄԱՆ ՍՄԲԱՏՅԱՆ/ .

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1- ին մասի,21-րդ կետի պահանջով, ինչպես նաև հմաձայն Հայաստանի հանրապետության կառավարության 2011թվականի դեկտեմբերի 22-ի «Նոտարական վավերացում չպահանջող պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու մասին » N 1851-Ն որոշման, Նոր Հաճըն համայնքի ավագանին որոշում է՝

1. Համայնքային սեփականություն հանդիսացող ջրամատակարարման և ջրահեռացման համակարգը՝ համաձայն սույն որոշման հավելվածի , նվիրատվության կարգով հանձնել Հայաստանի Հանրապետությանը ի դեմս ՀՀ ՏԿԵՆ Ջրային Կոմիտեի :

2.Գույքի գտնվելու վայրը ՝ Հայաստանի Հանրապետություն, Կոտայքի մարզ, քաղաք Նոր Հաճըն:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրվանից:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 108-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28 -Ի N 134-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍՏԵԼԼԱ ԲԱԴԱԼՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի առաջին մասով, 34-րդ հոդվածի առաջին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով, համայնքի ավագանին որոշում է.

1.Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 134-Ն որոշմամբ (այսուհետ՝ որոշում) հաստատված NN 2, 3, 6 հավելվածներում կատարել փոփոխություն համաձայն հավելված 1-ի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 109-Ն/

Լսեցին

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻ «ՆՈՐ ՀԱՃԸՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԲԱԺՆԵՄԱՍԵՐՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԻԼԻԹ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, հիմք ընդունելով Նոր Հաճըն համայնքի Քանաքեռավան բնակավայրի 12-րդ փողոցի, 7/2 հասցեի բնակիչ Հրաչիկ Հուսիկի Մովսիսյանի դիմումը, Նոր Հաճըն համայնքի ավագանին ո ր ո շ ու մ է՝

1.Նվիրատվության կարգով օտարել.

1) Ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրով, 07-064-0127-0035 կադաստրային ծածկագրով, Նոր Հաճըն, գ.Քանաքեռավան 12-րդ փողոց, 7-րդ շենք, բնակելի տուն 2 հասցեի 0.04 հա մակերեսով անշարժ գույքի՝ «Նոր Հաճընի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկին բաժնային սեփականության իրավունքով պատկանող 1/7 բաժնեմասը նվիրատվության կարգով օտարել դիմումատու Հրաչիկ Հուսիկի Մովսիսյանին:

2) Ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրով՝ 07-064-0313-0034 կադաստրային ծածկագրով, Նոր Հաճըն համայնքի Քանաքեռավան գյուղի վարչական տարածքում գտնվող 0.1651 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության անշարժ գույքի՝ «Նոր Հաճընի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկին բաժնային սեփականության իրավունքով պատկանող 1/2 բաժնեմասը նվիրատվության կարգով օտարել դիմումատու Հրաչիկ Հուսիկի Մովսիսյանին:

3) Ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրով՝ 07-064-0312-0002 կադաստրային ծածկագրով, Նոր Հաճըն համայնքի Քանաքեռավան գյուղի վարչական տարածքում գտնվող 0.3143 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության անշարժ գույքի՝ «Նոր Հաճընի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկին բաժնային սեփականության իրավունքով պատկանող 1/2 բաժնեմասը նվիրատվության կարգով օտարել դիմումատու Հրաչիկ Հուսիկի Մովսիսյանին:

2. Սահմանել, որ սույն որոշմամբ նշված անշարժ գույքերի բաժնեմասերը նվիրատվության կարգով դրանք տիրապետող անձին օտարելու գործընթացն իրականացնում է Նոր Հաճըն համայնքի ղեկավարը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

կադաստրային ծածկագրով, Նոր Հաճըն համայնքի Քանաքեռավան գյուղի վարչական

Կողմ-0 Դեմ-15 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 110-Ա/

Լսեցին

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԱՐԿԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՄԱՆ ՍՄԲԱՏՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով <<Կոտայք>> Ջրօգտագործողների ընկերության <<Նաիրի>> տեղամասի պետ Գ. Օսիպյանի գրությունը, համայնքի զոհվածների ընտանիքների ոռոգման ջրի պարտքացուցակի վերաբերյալ, Նոր Հաճըն համայնքի ավագանին որոշում է՝

1.Նոր Հաճըն համայնքի բյուջեի գործառնական դասակարգման 1.6.1 <<Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ>> հատվածի տնտեսագիտական դասակարգման 4819 <<Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին>> հոդվածից << Կոտայք >> ՋՕԸ - ի << Նաիրի >> տեղամասի համայնքների զոհվածների ընտանիքների ոռոգման ջրի պարտքը վճարելու համար հատկացնել 329033 դրամ դրամական նվիրատվություն:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդող օրը:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 111-Ա/

Լսեցին

ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2- ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՄԱՆ ՍՄԲԱՏՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի, Նոր Հաճըն համայնքի ավագանին որոշում է

1. Նոր Հաճըն համայնքի ավագանու 2- րդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օր սահմանել 2024 թվական դեկտեմբերի 13 -ը՝ 16:00 ժամը :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 112-Ա/

սասի, Նոր Հաճըն համայնքի ավագանին որոշում է

Ավագանու անդամներ

ՌՈՄԱՆ ԱՎԴԱԼՅԱՆ

ԱՐՄԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԽԱՉԱՏՈՒՐ ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

ԱՆԻ ԳԱԼՍՏՅԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՍԱՀԱԿ ԳՅՈՒԼԻՆՅԱՆ

ԱՐԿԱԴԻ ԹՈՐՈՍՅԱՆ

ԱՆԻ ԻՍՊԻՐՅԱՆ

ՍՈՖԻԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԱՐՏԻԿ ԽԱՌԱՏՅԱՆ

ԹՈՎՄԱՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ԳԵՂԱՄ ՄԽԻԹԱՐՅԱՆ

ԱՆՆԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ

ՆԵՐՍԵՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՆԱՐԻՆԵ ՕՋՆԵՑՅԱՆ

Համայնքի ղեկավար

ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ_____

Նիստն արձանագրեց՝ Արման Սմբատյանը

_____